Համառօտ Ամփոփում

Գիրքը մաս է կազմում եռահատոր մի ծրագրի, որ նպատակադրել եմ ամբողջացնել՝ եթէ ներեն ժամանակը եւ կարողութիւններս: Այս աշխատութիւնը, իրականութեան մէջ երկրորդն է շարքի, որի առաջինը, դեռ պատրաստութեան փուլում, պիտի պարփակի սփիւռքահայ երկրորդ եւ երրորդ սերունդների անդրադարձը Աղէտին, թէ ինչպէս է ծնողների, մեծհայրերի եւ մեծմայրերի աղիտալի անցեալի յիշողութիւնը փոխանցուել նրանց եւ ազդել նրանց աշխարհայեացքի, կեանքի ընկալման եւ վերջապէս, նրանց ինքնութեան վրայ: Եւ այդ բոլորը, ի հարկէ, սփիւռքահայ գրականութեան մէջ գտած